



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՅՈՒՆԻՍ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Սարսու 112

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԴՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻԻՆԸ

Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ երկիւղը ունի,
եւ մեծ հանոյ՜նով անոր պատուէրները կը կատարէ:
Այնպիսի մարդուն սերունդը երկրի վրայ գօրաւոր պիտի ըլլայ.
ուղիղ վարձով ապրող մարդոց զաւակները պիտի օրհնուին:
Անոր ընտանիքը ինչքերու առատութիւն եւ հարստութիւն պիտի ունենայ,
իսկ ինք Աստուծոյ աչքին յաւիտեանապէս արդար պիտի մնայ:
Խաւարի մէջ լոյս կը ծագի ուղիղ վարձով ապրող մարդոց,
բարեգութ, ողորմած եւ արդար մարդոց:
Բարի մարդը գթասիրտ կ'ըլլայ եւ փոխ կու տայ ուրիշներուն,
եւ իր գործերը արդարութեամբ կը վարէ:
Այդ պատճառով ալ արդար մարդը բնաւ պիտի չսասանի,
անիկա յաւիտեան պիտի յիշուի:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈԹՔ

ԲԱՆ ԶԹ

Աստուած եւ Տէր, կեանք եւ արարիչ,
ողորմած, գթած, լոյս, ներողամիտ, անոխակալ, մարդասէր,
ամենագութ, պարգեւատու, փրկիչ,
օրհնեալ, գովեալ, բարեբանեալ,
դարան ամրութեան, պապսպարան վարահութեան,
առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ,
քաւիչ մեղքերու, բուժիչ վերքերու, անհասանելիներու հնարք,
անմաքցելիներու՝ մերձաւոր, անյուսութեան ելք,
անունդ խոստովանուած՝ Աստուծոյ Որդի,
եւ քեզի հետ հօր եւ ահաւոր Հօրդ
եւ քեզի հետ երկրպագելի ամենակալ Սուրբ Հոգիին
փառք եւ գոհութիւն, յաւիտեանս. ամէն:

ԱՐԲԱՍ ԵՒ ՂՈՎՏ ԿԸ ԲԱԺՆՈՒԻՆ (13:1-13)

Աբրամ իր կնոջ եւ իր եղբօր գաւկին՝ Ղովքին հետ Եգիպտոսէն դուրս կու գայ վերադառնալու դէպի Քանանի հարաւակողմը, մինչեւ Բեթէլ: Եթէ երբեք Եգիպտոսը խորհրդանիշ է մեղքի, սարկութեան, կը նշանակէ հիմա այդ սարկութենէն դուրս է բայց իր ուղղութիւնը դէպի այս սեղանին փեղը, որ առաջ շինէր էր: Աբրամ իր հետ կը փանին առաքինութիւն եւ սրացուածք: Սարան կը խորհրդանշէ առաքինութիւն: Միւս կողմէ Աբրամ նաեւ հարուստ էր անասուններով, արծաթով ու ոսկիով: Անասունները կը խորհրդանշեն մարմնական, ֆիզիքական բաժինը, արծաթը՝ խօսքը, իսկ ոսկին՝ միտքը: Կարծէք ամէն ինչով բաւարար, հարուստ: Սակայն այդ բաւարարութիւնը կախում ունի փնտրողէն: Եւ Աբրամ հարուստ էր, նաեւ այն իմաստով որ կարող էր հակակշռի փակ առնել իր մարմնական կամ ֆիզիքական բաժինը, իր ունեցած հաւաքքով եւ առաքինութեամբ:

Այս հապուածը մեզի կը ներկայացնէ նաեւ Աբրամի խոնարհութիւնը, հակառակ իր աւագ եւ Ղովքի հօրեղբայրը ըլլալուն:

Միւս կողմէ նաեւ կը ներկայացնէ Ղովքը, ան ալ նոյնպէս հարուստ բայց ոչ Աբրամի նման, արծանօթով ու ոսկիով՝ այլ խօսքով՝ ոչ հարուստ առաքինութեամբ եւ արդարութեամբ:

Աբրամի հակառակ ազգայ ըլլալուն, ու մանաւանդ հարուստ, կրնար որեւէ մէկ փեղ վերադառնալ, բայց ան նախընտրեց վերադառնալ այն փեղը ուր սեղան մը շինէր էր Աստուծոյ:

Երկրի բաւականութիւնը կախում ունի իրարու նկատմամբ սերէն, խաղաղասիրութենէն եւ խոնարհութենէն:

Այս բաժինն մէջ նաեւ կան հովիւները, որոնց պարտականութիւնն է հսկել հօտին, բայց ըստ երեւոյթին անբարբեր, անհոգ եւ խնդրահարոյց մարդիկ էին, որոնց պատճառով վեճ կը ծագի Աբրամի եւ Ղովքի հովիւներուն միջեւ:

Ահա Աբրամի խաղաղասիրութիւնը եւ խոնարհութիւնը: Թող վեճ չըլլայ, որովհետեւ մենք եղբայրներ են: «Կ'աղաչեմ. զապուէ ինձմէ»:

Ահա երբ խոնարհութիւն, առաքինութիւն չունինք, դժուար կ'ըլլայ նաեւ մեր ընտրութիւնը, լաւը ընտրելուն մէջ: Ղովք իրեն համար կ'ընտրէ Յորդանին հովիտը, Սոդոմի քով, որուն բնակչները խիստ չար ու մեղաւոր էին Տիրոջ առջեւ: Ղովք միայն նկատի առաւ երկրին բարօրութիւնը, բայց ոչ անոր բնակիչներուն նկարագիրը: Մէկ ուղղութեամբ մտածելու իրողութիւնը:

ԱՐԲԱՍ ԴԷՊԻ ՔԵՐԲՈՆ ԿԸ ՉՈՒԷ (13:14-18)

Ահա Ղովքի բաժանումէն յետոյ է, որ Տէրը Աբրամի ցոյց կու փայ այն բոլոր երկիրը որ իրեն եւ իր սերունդին պիտի փայ յաւիտեան: Այս հապուածը մեզի կը ներկայացնէ Աստուծոյ խոստումը արդարին, իմաստունին եւ հաւաքացեալին որպէս հապուցում:

Միւս կողմէ, Տէրը նաեւ ասով ցոյց կու տայ գալիք փրկութիւնը եւ յաւիտենական կեանքի ժառանգութիւնը Քրիստոսով կատարուելիք:

Ահա այս խոստումին հիման վրայ Աբրամ առառել եւս իր հաւաքքը գորացնելու Աստուծոյ նկատմամբ: Եւ Աբրամ դարձեալ ելաւ իր փեղէն եւ գնաց բնակեցաւ Մամբրէի կողմներու մէջ, եւ հոն սեղան մը շինեց Տիրոջ:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

